

**Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ԳԸՃ

**ՍԻՐԱՔԻ ԳՐՔԻ  
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**



ստվածաշունչ մատյանի երկրորդականոն գրքերի շարքին պատկանող Սիրաքի իմաստությունը գրվել է Ն. Ք. Բ. դարասկզբին՝ Հեսուլ անունով մի հրեա իմաստունի կողմից, որ սերում էր Սիրաքի ցեղից: Գրքի գրելու ժամանակաշրջանում Պաղեստինում, ինչպես նաև հարակից բոլոր երկրներում, շատ հայտնի էին իմաստասիրության դպրոցները, որոնցից մեկում հայտնի ուսուցիչ էր Հեսուն: Սիրաքի իմաստությունն ուսումնասիրելիս կարելի է նկատել, որ գիրքը կարծես զանազան թեմաներին առնչվող դասընթացների մի հավաքածու է, կյանքի հմտությունների մասին պատմող անփոխարինելի ձեռնարկ:

Հեսուլի թոռն առաջին անգամ այս գիրքը թարգմանում է հունարենի Ն. Ք. 132 թ., որից հետո այն լայն տարածում է գտնում հունախոս երկրներում. «Վասն որոյ բարի եւ հարկաւոր վարկայ ինքն զայլիմն առածել զյօժարութիւն եւ զվաստակ թարգմանելոյ զգիրս զայս: Եւ տքնութեամբ յուրվիւ առ բերի զմակացութիւն ներ բացատում ժամանակի. առ այնոցիկ, որք առ աւարտն հասուցանեն զմատեանս զայս՝ տալ եւ այնոցիկ որք կամին մտօք նկատել եւ ասել՝ զիարդ պիտոյ իցէ ներակարգել զբարս. որք ըստ օրինի Տեառն յարադրեսցեն զկեանս կառաւարել»<sup>1</sup>: Հետագայում, երբ հունարեն այս տարբերակն ընդգրկվեց Յոթանասնից թարգմանության կանոնի մեջ, վերոբերյալ նախաբանը եւս գետեղվեց գրքի հիմնական տեքստում: Ե. դարի հայ թարգմանիչները չեն ընդգրկել այս հատվածն իրենց թարգմանության մեջ, որովհետեւ փութանակի թարգմանության համար աղբյուր հանդիսացած ասորերեն տեքստում այն բացակայում էր՝ եբրայերենից թարգմանված լինելու պատճառով: Անգամ հետագայում՝ հետեփեսոսյան շրջանում (431 թ.), երբ Հայաստան է բերվում

<sup>1</sup> Սիր. Նախաբան: «Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց», յԱմստեղյամ, 1666:

Հունարենն նոր սրբագրյալ տեքստի Կեսարյան բնագիրը, թարգմանիչներն ի բաց են թողնում եւ՝ հիշյալ նախաբանը, եւ՝ ասորերեն տեքստում բացակայող, իսկ այստեղ արդեն հանդիպող 44-51 գլուխները:

Սիրաքի հայերեն բոլոր ձեռագրերում գրքի հեղինակի անունը հանդիպում է մի քանի տարբերակներով՝ ա) «Գիրք Սիրաքայ, որ կոչեցաւ Յեսու», բ) «Իմաստութիւն Յեսուայ Որդւոյ Իսաքարայ», գ) «Խրատք Իմաստութեան մարգկան ի բանից Սիրաքայ», դ) «Իմաստութիւն Սիրաքայ Իմաստասիրի՝ առ Հնագանդեալ Որդի», ե) «Գիրք Սիրաքայ որ կոչեցո Յեսու», եւ ամենից տարածված երկու տարբերակներով՝ «Իմաստութիւն Սիրաքայ» կամ պարզապէս Սիրաք:

Գերմանացի երկու աստվածաշնչագետներ՝ Հենրիխ Հարկանեն<sup>2</sup> եւ Ջեզեֆ Ջիգլեր<sup>3</sup>, Սիրաքի հայերեն տեքստի երկու թարգմանություններ են մատնանշում՝ առաջինն անվանելով Arm 1, իսկ երկրորդը՝ Arm 2 (Arm 1-ը նախաեփեսոսյան թարգմանությունն է, իսկ Arm 2-ը՝ ետեփեսոսյան): Այդուհանդերձ, ո՛չ Հարկանեն եւ ո՛չ էլ Ջիգլերը չեն պնդում, թե նախաեփեսոսյան թարգմանությունը ասորերենից է եղել: Ջիգլերն իր հերթին ավելացնում է եւս մեկ թարգմանություն՝ Arm 3, ամենայն հավանականությամբ նկատի ունենալով Երուսաղեմի թ. 2558 ձեռագրում 1927 թ. Եղիշե արք. Դուրյանի կողմից գտնված հավելյալ գլուխները: Այս պարագայում պետք է նշել, որ թ. 2558 ձեռագիրը պետք է դիտարկել ոչ թե որպէս թարգմանական մի առանձին ընտանիքի պատկանող տարբերակ, այլ որպէս հնագույն թարգմանության մի մաս, քանի որ այն իր ոճով եւ բառապաշարով լիովին նման է Ե. դարի՝ Ս. Գրքի մնացյալ այլ գրքերի թարգմանությանը: Ժամանակ առ ժամանակ Ջիգլերը հղում է կատարում Ոսկան Երեւանցու կատարած թարգմանությանը՝ առանց նշելու այն իբրեւ հայերեն առանձին թարգմանություն: Ո. Երեւանցին այս թարգմանությունը կատարել է ավելի ուշ՝ 1666 թ., եւ այն գրեթե ամբողջապէս համընկնում է լատին Վուլգատային, ինչի պատճառով էլ այս տարբերակը երբեւէ չի դիտվել իբրեւ հայոց թարգմանաբանական ավանդույթների կրող:

Arm 1-ը գրեթե ամբողջապէս միաձուլվել է հետագայում խմբագրված տարբերակին, եւ հետեւաբար, մեզ համար անհնար է տեսնել տարբերությունները թե՛ մեզ հասած ձեռագրերում եւ թե՛ Ջոհրապյանի կամ

<sup>2</sup> H. Herkenne, De Veteris Latinae Ecclesiastici Capitabus I-XLIII, Leipzig, 1897, p. 28-33.

<sup>3</sup> J. Ziegler, Sapientia Jesu Filii Sirach, Göttingen, 1965, p. 33-35

Բագրատունու հրատարակություններում<sup>4</sup>: Այդուհանդերձ, Ձոհրապյանի բնագրում եւ մի քանի ձեռագրերում կարելի է նկատել ասորական Պեչիթային հատուկ կրճատումներ եւ զանազան համարների արհեստական գուգակցումներ: Անշո՛ւշտ, այս տարբերակի վրա իր ազդեցությունն է թողել հունարենից կատարված թարգմանությունը:

Հղում կատարելով Հարկանեին՝ Ստանիսլաս Լիոնեն հավաստում է, որ Ձոհրապյանի 1805 թ. տեքստը նման չէ ասորական Պեչիթային եւ բավականին տարբեր է հին լատինական տեքստից<sup>5</sup>: Միեւնույն ժամանակ նա չի առանձնացնում հունարեն որեւէ տեքստ ու մատնանշում այն որպես Սիրաքի հայերեն թարգմանության աղբյուր, քանի որ այս գրքի անգամ հնագույն թարգմանությունները լի են զանազան աղավաղումներով ու հավելումներով:

Arm 2-ը Սիրաքի տեքստի խմբագրված մի տարբերակ է՝ հունարենի կեսարական տեքստի նմանողությունամբ, որը Հայաստան է բերվել Եփեսոսի տիեզերական ժողովից հետո<sup>6</sup>: Ընդհանուր առմամբ Սիրաքի՝ մեզ հասած հայերեն բոլոր տեքստերը բխում են աստվածաշնչագիտության մեջ հայտնի G2 տարբերակից: Սա հունարեն մի տարբերակ է՝ հիմնված եբրայերեն սկզբնական բնագրի (H1) եւ Սիրաքի հեղինակի թուրան կողմից կատարված հունարեն առաջին թարգմանության (G1) վրա: Այն հանդիպում է հունարեն հնագույն թարգմանության ձեռագրական երկու ընտանիքներում՝ որոգինեսյան (origenistic) կամ վեցիջյանական (hexaplaric) եւ դուկիանոսյան (lucianic): Հայերենում, ինչպես նաեւ հին լատեներենի մի քանի այլ թարգմանություններում, կարելի է տեսնել որոգինեսյան, երբեմն էլ դուկիանոսյան տարբերակների հետքեր:

Մի շարք դեպքերում հայերեն Arm 1 եւ Arm 2 տեքստերը հանդես են գալիս իրենց սկզբնաղբյուրներից բավական ազատ մեկնաբանությունամբ: Այդուհանդերձ, լինելով այս գրքի հնագույն թարգմանություններից՝ երկու տարբերակներն էլ չափազանց կարեւոր են Սիրաքի տեքստի ուսումնասիրության համար: Այս երկու տեքստերը շատ հաճախ իրարից տարբերվում են ինչպես համարների ու գլուխների ծավալով, այնպես էլ որոշ հատվածների թարգմանություններով: Օրինակ՝ Սիրաքի Դ. 8-ին գուգահեռ Բագրատունու հրատարակության մեջ (1860 թ.) կարդում ենք. «Խոնարհեցո տնանկին զունկն քո» (= κλῖνον πτωχῶ τὸ οὖς σου). մինչդեռ Ձոհ-

<sup>4</sup> S. Lyonnet, Les Origines de la Version arménienne et le Diatessaron, Biblica et Orientalia 13, Rome: Pontificio Instituto Biblico, 1950, p. 11.

<sup>5</sup> S. Lyonnet, նշվ. աշխ., էջ 11:

<sup>6</sup> Հ. Ս. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հ. Բ., Երևան, 1976, էջ 308:

րապյանի թարգմանությունը (1805 թ.) այս համարի իմաստն ամբողջապես փոխվում է մեկ բառի տարբերությամբ. «տնանկի» փոխարեն Ձոհրապյանը օգտագործում է «իշխանին»: Սա տեղի է ունեցել հետեւյալ պատճառով. որպեսզի չկրկնվի Սիրաքի. Դ. 7-ի միտքը, Ձոհրապյանը տեքստում Դ. 8ա համարը հանել է եւ Դ. 7-ը միացրել է Դ. 8բ եւ Դ. 9ա հատվածներին: Կրճատելու այս հակվածությունը առկա է ինչպես Ձոհրապյանի տեքստում, այնպես էլ իր կողմից գործածված մի շարք ձեռագրերում:

Բագրատունին այս առումով հավատարիմ է հունարեն աղբյուրին, եւ նրա տարբերակը, ի տարբերություն Ձոհրապյանի տեքստի, ավելի քիչ է տարբերվում բնագրից: Այնուամենայնիվ, Բագրատունու տեքստում նույնպես հանդիպում ենք հատվածների, որոնք չեն համապատասխանում հայտնի ոչ մի աղբյուրի: Օրինակ՝ Սիրաքի Դ. 28-ի՝ վերջին հատվածում «Մի՛ արգելուր զբան ի ժամանակի նեղութեան» տողը չկա ո՛չ հունարեն եւ ո՛չ էլ ասորերեն թարգմանություններում: Հիշյալ երկու տարբերակներում էլ ունենք «ի ժամանակի փրկութեան» (ἐν καιρῷ σωτηρίας) թարգմանությունը: Ոսկան Երեւանցին իր հերթին Վուլգատայից կատարած թարգմանության մեջ հաճախ գործածում է այնպիսի արտահայտություններ, որոնք չեն համապատասխանում լատիներեն տարբերակին: Հիշյալ արտահայտություններից շատերը տեղ են գտել նաեւ Ձոհրապյանի եւ Բագրատունու հրատարակություններում:

Սիրաքի հայերեն տեքստը մեզ է հասել մոտավորապես 150 ձեռագրերի միջոցով, որոնցից շատերը պահվում են ՄՄ-ում եւ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրապահոցում: Ամենահին ձեռագրերը թվագրված են ԺԳ. եւ ԺԴ. դարերով եւ մեծավ մասամբ արտագրվել են Կիլիկիո հայոց թագավորությունում: Ձեռագրերի մոտավորապես յոթանասուն տոկոսն արտագրվել է ԺԷ.-ԺԸ. դարերում: Այս բոլոր մատյաններում, բացառությամբ երկուսի<sup>8</sup>, գիրքն ավարտվում է ԽԲ. կամ ԽԳ. գլուխներով: Նման դասավորության հանդիպում ենք նաեւ Ձոհրապյանի եւ Բագրատունու տեքստերում:

Բացի Աստվածաշունչ մատյանի ամբողջական ձեռագրերից՝ Սիրաքի իմաստությունը կարելի է գտնել նաեւ ինչպես առանձին, այնպես էլ միասին արտագրված իմաստության այլ գրքերի հետ:

<sup>7</sup> Սիր. Դ. 23 հունարեն թարգմանության մեջ. J. Ziegler, Sapientia Jesu Filii Sirach, Göttingen, 1965:

<sup>8</sup> Այս երկու ձեռագրերն են՝ Երուսաղեմի թ. 2558, 369բ-381ա եւ ՄՄ թ. 5608, 1363թ., 102ա-147բ:

1927 թ. Եղիշե պատրիարք Դուրյանը Երուսաղեմի մի չթվագրված ձեռագրում հայտաբերել է Սիրաքի ԽԲ.-ԽԶ. գլուխներից մի քանի հատվածներ<sup>9</sup>, որոնք ամբողջապես փոխեցին մինչ այդ գոյություն ունեցող այն կարծիքը, թե Սիրաքի հայերեն տեքստը երբեք էլ չի ունեցել ԽԴ.-ԾԱ. գլուխները: Իր մեծարժեք հոդվածում Դուրյան սրբազանը հավաստում է. «Տարակոյս չունինք, որ հին թարգմանութեան մասը կը կազմէ մեր հրատարակածը»<sup>10</sup>: Բայց եւ այնպես, Դուրյանը չի կարծում, որ իր գտած գլուխները թարգմանվել են Ե. դարի առաջին թարգմանիչների կողմից: Այս կարծիքի համար նա հիմք է ընդունում տեքստում առկա գրաբարյան մի քանի բառեր, որոնք իրենց ոճով խորթ են նախնական թարգմանությունների լեզվին:

Սիրաքի իմաստություն հայերեն թարգմանությունը վերաբերող մինչ այժմ գտնված ամենակարեւոր ու արժեքավոր հատվածները հայտնաբերել է ձեռագրագետ Գեւորգ Աբգարյանը՝ 1966 թ. Երեւանի Մատենադարանում: Նա ՄՄ թ. 5608 ձեռագրի 102ա-147բ էջերին գտել է Դուրյանի կողմից շուրջ քառասուն տարի առաջ հայտնաբերված հատվածները, ինչպես նաեւ՝ հավելյալ հատվածներ այլ գլուխներից: Այս ամբողջ ձեռագիրն ունի 149 թերթ, որոնց վրա պահպանվել են մի քանի հիշատակարաններ՝ գրված տարբեր դարերում: Ձեռագրի վերջին մասը, ուր առկա են նաեւ Սիրաքի վերոնշյալ հատվածները, արտագրվել է 1362 թ. Երուսաղեմում Կիրակոս դպիրի կողմից՝ Ներսեսի պատվերով: Այս մասը, բացի Սիրաքից, պարունակում է նաեւ տասներկու փոքր մարգարեությունները, տասներկու մարգարեների մահը, Դանիելի մարգարեությունն ու մահը<sup>11</sup>: Տվյալ հատվածների բացահայտումը դուրին չէր՝ գրքի առաջին էջի բացակայության պատճառով: Գլխաբաժանումների, ինչպես նաեւ համարակալումների բացակայությունը նույնպես դժվարություններ է առաջացրել՝ պարզաբանելու, թե Սիրաքի գրքի ո՛ր հատվածներն են իրականում առկա այս ձեռագրում: Այնուամենայնիվ, Աբգարյանն իր հրատարակած հոդվածում, Երուսաղեմի տեքստի համեմատությունում, ավելացրել է համարակալումները եւ կատարել անհրաժեշտ գլխաբաժանումներ:

<sup>9</sup> Սա վերնում հիշատակված՝ Երուսաղեմի թ. 2558 ձեռագիրն է, որի մի մասը արտագրվել է ԺԷ. դարում, իսկ մյուս մասը, որի մեջ ընդգրկված է նաեւ Սիրաքի այս հատվածը, դեռևս թվագրված չէ:

<sup>10</sup> Ե. Դուրյան, Նորագիտ գլուխներ Սիրաքայ գրքին հին թարգմանությունն, «Սիոն», Երուսաղեմ, 1927, էջ 246-250.

<sup>11</sup> Ի տարբերություն Ջոհրայայանի տեքստի, ուր տասներկու մարգարեները ի մի են բերված մի ցանկի ներքո՝ Օսեի մարգարեությունից առաջ, այս ձեռագրում մարգարեներից յուրաքանչյուրը բերված է առանձին:

Գեևորգ Աբգարյանի գտած հատվածները յուրահատուկ են նրանով, որ չեն պարունակում Դուրյանի հատվածներում տեղ գտած ուշ շրջանի թարգմանություններին հատուկ բարդ բառերը: Ըստ նրա՝ այս հատվածները թարգմանվել են Ե. դարի թարգմանիչների կողմից: Միակ հատվածը, որի լեզուն եւ ոճը չեն համապատասխանում տեքստի շարունակությունը, Սիրաքի ԺԸ. 30-Ի. 26-ն է: Այս հատվածում առկա են բազմաթիվ սխալներ ու փոփոխություններ, ինչը ցույց է տալիս դրա՝ ավելի ուշ շրջանին պատկանելը: Հնարավոր է, որ հետագա դարերի արտագրողները նկատել են այս հատվածի բացակայությունը հին ձեռագրերում եւ այն ավելացրել են ուշ շրջանի ձեռագրերի նմանողությամբ: Հունարենի հետ համեմատելիս անգամ նկատելի է, որ այս հատվածը սկզբունքորեն տարբերվում է թե՛ իմաստային եւ թե՛ բնագրական առումով: Այն գրեթե բառացիորեն արտագրված է Զոհրապյանի հրատարակության մեջ, ինչը ենթադրելու տեղիք է տալիս, որ նրա օգտագործած ձեռագրերից մեկը կամ մի քանիսը պարունակել են ՄՄ թ. 5608 ձեռագրի նույն հատվածը:

Այսպիսով, Սիրաքի ԺԸ. 30-Ի. 26 հատվածը բացակայել է Ե. դարի թարգմանություններում, եւ Զոհրապյանի ու Երեւանի 1966 թ. տեքստերում առկա այս հատվածը հետսամուտ է:

Հովհաննես Զոհրապյանն Աստվածաշնչի իր հրատարակության մեջ Սիրաքի իմաստությունը զետեղել է ոչ թե Սողոմոնի իմաստությունից հետո, ինչպես ավանդաբար դրվել է, այլ՝ Նոր Կտակարանից: Այս դասավորությունը նա բացատրում է նրանով, որ նմանօրինակ տեղաբաշխումը բնորոշ է հայերեն Աստվածաշնչի հնագույն ձեռագրերին, եւ հետեւաբար, նա պատշաճ է նկատել Սիրաքի գիրքը զետեղել Ս. Գրքի կանոնի վերջում<sup>12</sup>: Ավելին, Զոհրապյանը նկատում է, որ Սիրաքի լեզվաոճական որոշ յուրահատկություններ ցույց են տալիս, որ այս գրքի թարգմանությունը կատարվել է ո՛չ թե Ս. Թարգմանիչների կամ անգամ նրանց կրտսերագույն սաների կողմից, այլ՝ հայոց Ոսկեդարից մի քանի դար անց<sup>13</sup>: Չնայած Զոհրապյանն ուղղակիորեն չի նշում, սակայն այն համոզմունքն ունի, որ Սիրաքը թարգմանվել է Հովհաննու Հայտնության հետ միասին՝ ԺԲ. դարում, երբ հայ հեղինակները, համեմատելով Ս. Գրքի հայկական կանոնը հունականի եւ լատինականի հետ, նկատել են որոշ գրքերի պակաս եւ կատարել նոր թարգմանություն: Այդուհանդերձ, հայտնի է,

<sup>12</sup> «Աստուածաշունչ Սաստան Հին եւ Նոր Կտակարանաց», աշխ.՝ Յ. Զօրիապետանի, Վենետիկ, 1805, էջ 8:

<sup>13</sup> Նույն տեղում:

որ Հին Կտակարանի իր հրատարակությունը պատրաստելիս Զոհրայ-յանն իր ձեռքի տակ չունեի բավական քանակությամբ ձեռագրեր, եւ հետեւաբար, նրա ներկայացրած փաստարկները չեն կարող արտահայտել Սիրաքի տեքստի հետ կապված ամբողջական պատկերը: Բավական է նշել միայն, որ Սիրաքից բազմաթիվ մեջբերումներ տեղ են գտել Խոսրով Անձեւացու եւ Գրիգոր Նարեկացու երկերում: Ընդ որում, այդ մեջբերումներից շատերը գրեթե տառացի համընկնում են հետագա դարերում արտագրված ձեռագրերին<sup>14</sup>:

Սիրաքի՝ ավելի վաղ թարգմանված լինելու օգտին է խոսում Արսեն Բագրատունին: Ըստ վերջինիս՝ Սիրաքը թարգմանվել է Ե. դարում: Բագրատունին եւս իր փաստարկն ապացուցելու համար հիմք է ընդունում Սիրաքի գրքի լեզուն ու ոճը, որն ըստ նրա, լիովին համընկնում է Ե. դարի այլ թարգմանություններին: Սիրաքի մասին նախաբանը Բագրատունին ավարտում է՝ պնդելով, որ իր ձեռքի տակ եղած որոշ ձեռագրեր, որոնցում կա նաեւ Սիրաքի գիրքը, Ե. դարի կրկնօրինակներ են: Սա հիմք ընդունելով՝ Բագրատունին Աստվածաշնչի իր հրատարակության մեջ Սիրաքի գիրքը գետեղում է Սողոմոնի իմաստությունից հետո՝ Հոբից առաջ<sup>15</sup>: Նույնօրինակ գիրքորոշման է հարում նաեւ գերմանացի աստվածաշնչագետ Էմիլ Քաուլը, ով Սիրաքի գրքի հայերեն տարբերակը համարում է ամենահին եւ լավագույն թարգմանություններից մեկը: Քաուլը կարծում է, որ տեքստային առումով Սիրաքը բավական հավատարիմ է հունարեն սկզբնաղբյուրին<sup>16</sup>, եւ դրա լեզվական յուրահատկությունները կարելի է գտնել Ոսկեդարի թարգմանիչների մյուս թարգմանություններում եւս:

1927 եւ 1966 թվականներին գտնված հատվածներն ամրապնդում են այն վարկածը, որ գոյություն է ունեցել Սիրաքի գրքի մի վաղ թարգմանություն, որը չի պարունակել ներկայումս գոյություն ունեցող տեքստերում առկա հավելումներն ու աղավաղումները: Երուսաղեմի թ. 2558 ձեռագրում տեղ գտած եւ հունարենից գրեթե տառացի թարգմանված հետեւյալ բառերի առկայությունը հիմք է հանդիսացել, որպեսզի Սիրա-

<sup>14</sup> St. Grigor Narekac'i, *Speaking with God from the Depths of the Heart*, (trans. T. J. Samuelian), Yerevan, 2002, p. 99.

<sup>15</sup> «Գիրք Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց», աշխ. Ա. Բագրատունու, Վենետիկ, 1860, էջ 681-704:

<sup>16</sup> Գ. Արգարյան, Սիրաքի գրքի հնագույն թարգմանության նորահայտ հատվածներ, «Էջմիածին», 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 60-70. հմմտ. E. Kautzsch, *Die Apokryphen und Pseudepigraphen des Alten Testaments*, B 1, Tübingen, 1900, S. 249.

քի թարգմանությունն տարբերվում տեղափոխվի առնվազն Ե. դարի վերջին քառորդ՝ մտածություն (= διακρίσεις), իմացություն (= νόησις) եւ բարեբանեմ (= εὐλογία): Սակայն ՄՄ թ. 5608 ձեռագիրը գերծ է վերոնշյալ բառերից եւ ոչնչով չի տարբերվում ոսկեդարյան սուրբգրային այլ թարգմանություններից: Միաժամանակ Ս. Հովհան Ոսկեբերանի ճառերում Սիրաքից կատարված մեջբերումները եւս ցույց են տալիս, որ վերջինս թարգմանվել է Ե. դարում՝ սուրբգրային այլ գրքերի հետ միասին: Գիտենք, որ Ոսկեբերանի ճառերի մեծ մասը թարգմանվել է հայերեն հենց Ե. դարում՝ գրերի գյուտից անմիջապես հետո, եւ ինչպես Խոսրով Անձեւացու եւ Ս. Գրիգոր Նարեկացու պարագայում, Ս. Ոսկեբերանի ճառերում առկա սիրաքյան հղումները եւս չափազանց նման են թե՛ Ձոհրապայանի ու Բագրատունու հրատարակություններին եւ թե՛ մի շարք ձեռագրերում առկա այս գրքի օրինակներին: Սա ցույց է տալիս, որ Ս. Ոսկեբերանի ճառերի թարգմանիչներն իրենց ձեռքի տակ արդեն իսկ ունեին Սիրաքի գրքի՝ նախապես թարգմանված օրինակ<sup>17</sup>:

Սիրաքի գրքի հայերեն թարգմանությունն հպանցիկ ուսումնասիրությունն անգամ բավական է՝ նկատելու տեքստի թե՛ համարակալման եւ թե՛ հետագա դարերում գրիչների կողմից կատարված հավելումների հետ առնչվող մի շարք խնդիրներ: Ոսկան Երեւանցու թարգմանությունը գիտական տեսանկյունից երբեք չի դիտարկվել որպես առանձին թարգմանություն՝ մեծ արժեք չունենալու պատճառով:

Ձոհրապայանի՝ հայերեն հնագույն թարգմանությունը գտնելու փորձը նույնպես հաջողությամբ չպսակվեց, քանզի արդյունքում նրա հրատարակության մեջ տեղ գտավ բազմաթիվ կրճատումներով մի տեքստ, որի մեջ առկա են իրար չհամապատասխանող տարբեր համարների առանձին մասերի միակցմամբ ստեղծված ամբողջական գլուխներ, որոնք գրեթե անհնար է կարդալ: Այդուհանդերձ, Ձոհրապայանի տեքստի յուրահատկությունն ու արժեքը որոշ համարների դեպքում ասորական բնագրի նմանությունն է: Այն նաեւ օգտակար է Սիրաքի՝ Ե. դարում թարգմանված լինելու եւ հայ հասարակության մեջ այս գրքի լայն կիրառությունը փաստելու առումով:

Ձոհրապայանի տեքստի համեմատությամբ՝ Բագրատունու տեքստն ավելի բարվոք վիճակում է: Նախ նախորդ հրատարակությունների համեմատ շատ ձեռագրեր իբրեւ հիմք ունենալու, ինչպես նաեւ Երեւանցու եւ Ձոհրապայանի արդեն իսկ հրատարակած տեքստերը գործածելու

<sup>17</sup> Գ. Համբարձումյան, Սիրաքի գրքի հայկական տեքստը, անտիպ:



պատճառով Բագրատունին հանդես եկավ մի հրատարակություն, որը մինչև հիմա համարվում է լավագույնը՝ այդ թվում Սիրաքի տեքստի առումով: Չնայած այն փաստին, որ Բագրատունու հրատարակությունից բացակայում են Ը., ԼԷ., ԽԳ. գլուխները, այն, միեւնույն է, դեռևս անգերազանցելի է տեքստի պարզությունը եւ ճոխությունը: Այս պատճառով է, որ Բագրատունու տեքստը որպես հիմք է ծառայել ինչպես 1994 թվականին Հայաստանի Աստվածաշնչային ընկերության արեւելահայերեն նոր թարգմանություն, այնպես էլ այժմ նախաձեռնված՝ դրա լրամշակված տարբերակի պատրաստության համար:

Նորայր արք. Պողարյանն Ի. դարի առաջին կեսին ուսումնասիրություն է իրականացրել Ս. Գրքի կանոնի վերաբերյալ: Հիշյալ ուսումնասիրության մեջ Պողարյանն անդրադարձել է Առաքելական Երկրորդ կամ Կղեմեսի, Կանոնք Հարանց Հետեւողացի եւ Պարտավի ժողովի կանոնախմբերի այն մասերին, որոնք վերաբերում են Ս. Գրքի կանոնին: Իր ուսումնասիրություն արդյունքում Պողարյանը եզրակացնում է, որ Պարտավի կանոնախմբի հավելվածում առկա այն կանոնը, որի մեջ Սիրաքը տեղադրված է Հին Կտակարանի կանոնական ցանկի վերջնամասում, չի ներկայացնում Հայոց Եկեղեցու պաշտոնական դիրքորոշումը, չնայած որ այն մեծապես նման է Առաքելական կանոնախմբի ՁԵ. կանոնին:

Եթե անգամ ընդունենք, որ այս հավելվածը պատահամբ է հայտնվել միայն Պարտավի կանոնախմբում, միեւնույն է, այն կարելի է տեսնել ե՛ւ Առաքելական Կանոնախմբում, ե՛ւ Հարանց Հետեւողացում: Ընդ որում, Վազգեն Հակոբյանի կատարած համեմատությունը հունարեն սկզբնաղբյուր տեքստերի հետ ցույց է տալիս, որ այս կանոններն Ընդհանրական Եկեղեցու ավանդության մասն են կազմում<sup>18</sup>: Հակոբյանը նաեւ մատնանշում է այն փաստը, որ դարերի ընթացքում ընդհանրական կամ տեղական եկեղեցական ժողովների այն կանոնները, որոնք չեն համապատասխանել Հայոց Եկեղեցու սովորություններին ու ավանդույթներին, կրճատվել կամ առհասարակ հանվել են գործածությունից:

Սա նշանակում է, որ եթե Սիրաքի գրքի հետ կապված մոտեցումը չհամապատասխաներ հայկական ավանդույթներին, այն անպայման հանված պիտի լիներ կանոնախմբերից: Հետեւաբար, Առաքելական կանոնախմբի թ. ՁԵ. կանոնը ոչ թե պարզապես հունարենից կատարված թարգմանություն է, այլ ուղղակիորեն ընդունված կանոն՝ Հայ Եկեղեցու կողմից: Սիրաքի իմաստությունն առնչվող Առաքելական կանոնախմբի

<sup>18</sup> Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, Կ. Ս., Երեսն, 1964, էջ 557-565.

հիշյալ Ձե. կանոնը նախ ասում է. «Եղիցի ձեզ ամենեցուն եկեղեցակահանաց եւ աշխարհականաց պաշտել Գիրք Սուրբք Հին եւ Նոր Կտակարանաց», ապա՝ ներկայացնում է Հին Կտակարանի կանոնը. «Մովսէսի գիրք՝ Ծննդոց, Ելիցն, Ղեւտական, Թիւքն, Երկրորդ օրէնք. Յեսու Նաւեայ, Դատաւորքն, Հռութն, Թագաւորութեանցն Դ, Մնացորդացն գիրք, Եզրի բանք Բ, Յոբ Ա, Սաղմոսաց գիրք Ա, Սողոմոնի գիրք Ա, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ», վերջում ավելացնելով՝ «...եւ արքայաւար պարգաւնաւորեացի առ ի յուսուցանել զձեզ մանկունս յուսման բազում Սիրաքս լի իմաստութեամբ»<sup>19</sup>:

Հարանց Հետեւողաց կոչվող կանոնախմբում նույն կանոնը երեւում է փոքր-ինչ տարբեր: Այն սկսում է հետեւյալ նախաբանով. «Եւ եղիցի ձեզ ամենեցուն եկեղեցակահանացը Սուրբ Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց»<sup>20</sup>, ապա նշվում են Հին Կտակարանի գրքերի անունները, որտեղ Երգ Երգոցը, Առակացն ու Սողոմոնի իմաստութիւնը ընդհանուր մեկ անվան տակ ներկայացված են որպէս «Սողոմոն Գ.»: Եզրասի Ա. եւ Բ. գրքերը տեղադրված են իմաստութիւնից հետո՝ Սիրաքի փոխարեն: Ինչպէս նախորդ կանոնախմբի պարագայում, այստեղ եւս վերջում ավելացվում է՝ «Կալձիք առ ի խրատել մանկունս ձեր Սիրաք»<sup>21</sup>: Այս վերջին հատվածում հետաքրքրական է այն, որ ի տարբերութիւն Առաքելական կանոնախմբի՝ այստեղ խրատն ուղղված է բացառապէս եկեղեցակահաններին: Այն ցույց է տալիս այս գրքի բացառիկ դերը հայկական միջավայրում եւ հատկապէս նրա կիրառութիւնը դպրոցներում: Կարող ենք այս հատվածից ենթադրել, որ Սիրաքի տեղադրումը սուրբգրային կանոնի վերջնամասում եւ ոչ թե իր ներկայիս ընդունված տեղում՝ Սողոմոնի իմաստութիւնից հետո, բացատրվում է ոչ թե այս գրքի ոչ կանոնական լինելով, այլ ընդհակառակը՝ կանոնի մեջ իր բացառիկ բարոյադաստիարակչական դերով: Սիրաքի այսօրինակ կիրառութիւնը կարելի է բացատրել նաեւ Զոհրապյանի եւ մասամբ Բագրատունու հրատարակութիւններում առկա եւ միայն հայերեն թարգմանութեանը հատուկ չորս հավելյալ հատվածների գոյութիւնը<sup>22</sup>:

<sup>19</sup> “The Apostolic Canons: The Canons of the Holy and Altogether August Apostles”, N 85. [http://www.voskresie.info/spl/aposcanon.html], Revised 29.02.2012.

<sup>20</sup> «Կանոնք Հարանց Հետեւողաց», թ. ԻԷ.:

<sup>21</sup> Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 113:

<sup>22</sup> Այս հատվածներն ամենայն հավանականութեամբ Սիրաքի հայերեն տեքստի մեջ ավելացվել են հետագա դարերում: Չի բացառվում նաեւ, որ այս հատվածները առկա են եղել հունարեն մի տեքստի մեջ՝ յուսանքում, որ հետո՝ թարգմանության ժամանակ, ստել է հայերեն տեքստի մեջ: Ոչ՝ Յոթանասնիցում եւ ոչ՝ էլ ասորական սկզբնաղբյուր-

Պարտավի (768/771) կանոնն, ի տարբերություն մյուս կանոնների, սկզբնապես գրվել է հայերենով եւ հետեւաբար դրա՝ հայկական ավանդույթյան մաս կազմելու հարց այս դեպքում չի կարող լինել: Ինչպես հիշյալ բոլոր կանոնախմբերում, այստեղ նույնպես Ս. Գրքի կանոնի մասին հատվածը տեղադրված է վերջում: Նոր Կտակարանի կանոնին առնչվող մասն առհասարակ բացակայում է: Վերջում՝ մարգարեություններին վերաբերող հատվածից անմիջապես հետո, առանց Մակաբայեցիների գրքերը հիշատակելու, կանոնն ասում է. «Եւ արտաքուստ պատգամաւորեսցի առ ի յուսուցանել ձեր մանկունս զուսումնաբազումսն Սիրաքայ իմաստնոյ»<sup>23</sup>: Այս խրատը եւս իր բնույթով նման է Առաքելական կանոնախմբի Ձե. կանոնին՝ որոշակի յուրահատկությամբ: Եթե Առաքելական կանոնախմբի հայերեն թարգմանություն մեջ «մանկունս ուսման բազում» հատվածում «ուսման բազումը» վերաբերում էր Սիրաքին, այստեղ «մանկունս ուսումնաբազումսն» արտահայտությունը ցույց է տալիս, որ «ուսումնաբազումսն» բառը վերաբերում է մանուկներին եւ ոչ թե Սիրաքին: Սրանով եւս մեկ անգամ հաստատվում է մեր կողմից առաջարկված տեսակետը, որ Սիրաքի գրքի դիրքը կանոնի վերջում պայմանավորված է իր յուրահատուկ կարգավիճակով: Այս պարագայում, Սիրաքի ուսումնասիրությունը կարող էին զբաղվել միայն այն աշակերտները, ովքեր ավարտած կլինեին իրենց «ուսումնաբազում»:

Այսպիսով, Սիրաքի գրքի ուսումնասիրությունը հայկական միջավայրում դեռեւս իր սկզբնավորման շրջանում է: Այս գրքի կարեւորությունն ու մեծ արժեքը հասկանալով՝ այն պետք է մանրակրկիտ ու համակողմանի քննության ենթարկել՝ լուծելու գրքի թե՛ թարգմանությունը եւ թե՛ զուտ աստվածաբանությանն առնչվող մի շարք խնդիրներ: Ընդ որում, Սիրաքի հետ կապված որեւէ այլ ուսումնասիրություն կատարելուց առաջ պետք է նախ ձեռնամուխ լինել քննական բնագրի ստեղծմանը, որով ի մի կբերվեն այս գիրքը պարունակող բոլոր ձեռագրերը եւ կխմբավորվեն՝ ըստ իրենց արտագրման ժամանակաշրջանի եւ սկզբնաղբյուրների տարբերության:

Ներում այս հատվածները չկան, ինչն ավելի մեծ կարեւորություն ու յուրահատկություն է տալիս հայերեն թարգմանությանը:

<sup>23</sup> Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 18:

## РЕЗЮМЕ

В статье предусматривается устойчивый богословский анализ армянской версии перевода книги Сираха. Роль и место этой книги в каноне армянского перевода Библии на протяжении многих веков была спорной. Автор уделяет большое внимание текстовой оценке книги Сираха на армянском языке. Рудольф Сменд и Джозеф Зиглер, в своих важных текстовых исследованиях книги Сираха, обширно использовали армянский текст в основе своих собственных работ. Это предало немало интереса к армянскому тексту среди западных ученых. Принимая во внимание необходимость краткого исследования по армянской версии книги Сираха, автор написал статью, которая была также подробно изложена в его монографии, опубликованной De Gruyter в январе 2016 года.

## SUMMARY

This article provides a sustained theological analysis of the Armenian version of the Book of Sirach. The role and place of the latter in the canon of the Armenian translation of the Bible has for centuries been disputed. The author places a great emphasis on the textual evaluation of Sirach in Armenian. Both Rudolph Smend and Joseph Ziegler, the pinnacles of the Siracide textual research have made a vast use of the Armenian text in penning down their own works. This has given a fair amount of interest towards the Armenian text amongst western scholars. Taking into consideration the need of a concise research on the Armenian Sirach, the author has come up with the article which has been also presented in detail in his monograph published by De Gruyter in January, 2016.

